

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՌՈՍԱՆԱԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
Անգլերենի թիվ 1 ամբիոն

ՄԱՐԳԱՐԻՏ ԱՊՐԵՍՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի
աշխարհագրության բաժնի ուսանողների համար
«ԲԱԿԱԼԱՎՐ» համակարգի սահմաններում

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2009

ՀՏԴ 802.0:378
ԳՄԴ 81.2Անգլ+74.58
Ա 681

**Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ
ռոմանագերմանական բանասիրության
ֆակուլտետի խորհուրդը**

Մարգարիտ Ապրեսյան (բ.գ.թ. դոցենտ), Գևորգ Բարսեղյան (բ.գ.թ.)
Ա 681 Անգլերենի ծրագիր: - Եր.: Հեղինակային հրատ., 2009 թ., 28 էջ:

Նախատեսված է ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության
ֆակուլտետի աշխարհագրության բաժնի ուսանողների համար
«ԲԱԿԱԼԱՎՐ» համակարգի սահմաններում:

ԳՄԴ 81.2Անգլ+74.58

ISBN 978-9939-53-537-1

© Մ. Ապրեսյան, 2009 թ.
© Գ. Բարսեղյան, 2009 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անգլերենի դասավանդումը հատուկ (մասնագիտական) նպատակներով (English for Special Purposes-ESP) համեմատաբար նոր ուղղություն է օտար լեզվի դասավանդման մեթոդաբանությունում: Այն պայմանավորված է գիտության և տեխնիկայի սրընթաց զարգացմամբ, համաշխարհային շուկայում առաջացած քաղաքական և տնտեսական նոր կապերով: Միջազգային քիզնեսի, տնտեսության, տեխնիկայի և գիտության բնագավառների զարգացումն օտար լեզուների մասնագետների և գիտնականների մեծ պահանջարկ առաջացրեց: Հետևաբար կարևոր խնդիրներ են դրված օտար լեզու դասավանդողների առջև, որոնք պետք է մշակեն նոր մեթոդներ և ծրագրեր՝ տարբեր ոլորտների մեծաքանակ մասնագետներ և գիտնականներ պատրաստելու համար, որոնք կկարողանան պատշաճ ձևով ներկայացնել Հայաստանի գիտական ներուժը միջազգային ասպարեզում:

Գիտակցելով անգլերենի ուսուցման անհրաժեշտությունն ու արդիականությունը՝ այն լուրջ ուշադրության է արժանացել բարձրագույն ուսումնական հաստատություններում: Բանիմաց և բազմակողմանիորեն զարգացած մասնագետը յուրաքանչյուր բնագավառում միայն օտար լեզվի միջոցով կարող է լավատեղյակ լինել շրջապատող աշխարհի նորություններին:

Վերջին տասնամյակում նշանակալից փոփոխություններ են կատարվել օտար լեզուների դասավանդման մեթոդներում: Այս փոփոխությունները տեղի են ունեցել առաջին հերթին ուսուցման նպատակների կանխորոշման մեջ: Հարկ է սովորեցնել օտար լեզուն ոչ թե սոսկ իբրև հաղորդակցման միջոց, այլ այն ուսուցանել իբրև մասնագիտական հաղորդակցման միջոց՝ ելնելով տարբեր ոլորտների մասնագետներին այսօր առաջադրվող արդիական պահանջներից: Հետևաբար ուսումնական ու գիտամեթոդական նոր ծրագրեր, ձեռնարկներ և դասագրքեր կազմելու խիստ անհրաժեշտություն է զգացվում, որոնք համահունչ կլինեն օտար լեզուների ուսուցման արդի մեթոդների պահանջներին:

Երևանի պետական համալսարանում վերջին երկու տասնամյակում կազմվել և կազմվում են բազմաթիվ ուսումնական ձեռնարկներ, սակայն իրողությունն այն է, որ ոչ մասնագիտական ֆակուլտետներում սովորողների մեծ մասն իրենց ուսումնառության շրջանում լավ չեն տիրապետում գեթ մեկ օտար լեզվի, չեն կարողանում մասնագիտական գրականությունից

ինքնուրույն օգտվել և, որ ամենակարևորն է, այդ լեզվով արտահայտվել մասնագիտական հարցերի շուրջ: Հարց է ծագում. ո՞րն է առկա խնդրի բանական լուծման տարբերակը:

Սույն գիտամեթոդական ծրագիրը կփորձի հետամուտ լինել վերոհիշյալ խնդրի գործնական լուծմանը: Այն նախատեսվում է աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի աշխարհագրության բաժնի ուսանողների համար «բակալավր» համակարգի սահմաններում:

Ժամանակակից աշխարհագրագետ-երկրաբանների համար օտար լեզվին տիրապետելը չի սահմանափակվում միայն մասնագիտական տերմիններով: Աշխարհագրության և երկրաբանության բնագավառում աշխատող յուրաքանչյուր մասնագետ պետք է տիրապետի նաև մասնուլիմ, հեռուստատեսությանը, ինտերնետային կայքին, սովյալ լեզվով խոսող ժողովրդի պատմությանը, աշխարհագրությանը և սովորույթների վերաբերող բառապաշարին: Այսպիսի հմտություններ ու կարողություններ մշակելու և զարգացնելու հարցում մեծ է անգլերենի դասավանդման մեթոդների դերը:

Անգլերենի ուսուցումը տարբեր ֆակուլտետներում ունի ընդհանրություններ, սակայն յուրաքանչյուր ֆակուլտետում կան դասավանդման մասնագիտական առանձնահատկություններ: Սույն ձեռնարկը կազմվել է աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի աշխարհագրական բաժնի համար, հիմնվելով վերջինիս առանձնահատկությունների վրա:

Ե՛ղև աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետում սովյալ ծրագիրը կիրառվելու է աշխարհագրության բաժնի ուսանողներին անգլերեն դասավանդելու համար, որոնք մասնագիտանում են առտասահմանյան երկրների ֆիզիկական և սոցիալ-տնտեսական, ինչպես նաև ռեզիդնալ աշխարհագրության, համաշխարհային տնտեսության և զեոբնապահպանության ուսումնասիրման մեջ: Ծրագիրը կարող է օգտագործվել որպես տիպային այլ համալսարանների և բուհերի աշխարհագրության բաժնի ուսանողներին անգլերեն դասավանդելու համար:

Անգլերենի դասընթացի ուսուցումը

Որքան էլ տարբեր լինեն ըստ պահանջների ստեղծված անգլերենի դասավանդման անհրաժեշտ նյութերի առանձնահատկությունները, գոյություն ունեն սկզբունքներ, որոնք ընդհանուր են բոլորի համար: Նախ և առաջ սովորողները պետք է կարողանան ընկալել հաղորդակցման համատեքստի և նրա որոշակի մակարդակին բնորոշ լեզվի կարևորությունը, ինչպես նաև մայրենի լեզվում ձեռք բերած հմտությունների օգտագործման անհրաժեշտությունն օտար լեզու սովորելիս: Անհրաժեշտ է ուսուցանվողին սովորեցնել, թե ինչպես սերտել՝ առանձնահատուկ տեղ հատկացնելով նրա ինքնուրույնությանը: Այս ամենը պետք է ուղեկցվի բազմազան դիդակտիկ նյութերի (լուսանկարներ, արբանյակային հեռուստատեսություն, վավերագրական նյութեր և այլն) և մեթոդների (աշխատանք զույգերով կամ խմբերով, սեմինարներ) օգտագործմամբ: Դասընթացի ծրագրավորումը նմանատիպ սկզբունքներով, անշուշտ, կնպաստի հատուկ (մասնագիտական) նպատակներով անգլերենի (ESP) դասավանդման արդյունավետության բարձրացմանը:

Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետ ընդունվող ուսանողները, որպես կանոն, չունեն պատշաճ քերականական գիտելիքներ: Անգլերենի դասախոսի խնդիրն է սովորեցնել, ապա և խորացնել այդ գիտելիքները, վարժությունների և այլապի առաջադրանքների միջոցով հասնել նրան, որ այդ գիտելիքները գործնականում վերածվեն կայուն հմտությունների և կարողությունների: Հարկ է նշել, որ երկրաբանության և աշխարհագրության ֆակուլտետում անգլերեն ուսումնասիրողների համար հույժ կարևոր է կարճատև ժամանակում դրանք ամրակայել այն կառուցվածքների և բառապաշարի սահմաններում, որոնք անհրաժեշտ են ինչպես ուսումնասիրվող օտար լեզվով (անգլերեն) մասնագիտական գրականությունից օգտվելու, այնպես էլ բանավոր արտահայտվելու համար:

ՍԱՐԳԱՐԻՏ ԱՊՐԵՍՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ԱՆԳԼԵՐԵՆԻ ԾՐԱԳԻՐ

ԵՊՀ աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի
աշխարհագրության բաժնի ուսանողների համար
«ԲԱԿԱԼԱՎՐ» համակարգի սահմաններում

Ստորագրված է տպագրության՝ 20.10.2009 թ.:
Թուղթ՝ օֆսեթ: Չափս՝ 60x84 1/16: Տպագր. 1.75 մամուլ:
Պատվեր՝ 71: Տպաքանակ՝ 100:

ԵՊՀ տպագրատուն, Երևան, Արուսյան 52